

ԱՊԱԳԻՆՅ

ԽԳ. ՏԱՐԻ ԹԻՒ 2411 ԵՐԿՈՒԾԱԲԹԻ 27 ՆՈՅԵՄԲԵՐ 2023
• VOL. XLIII, NO 2411 • 27 NOVEMBRE 2023 • MONDAY, 27 NOVEMBER 2023



Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

ՔՐԵՄԼԻՆ ՅՈՅՍՈՎ Է, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՊԿ-Ի ՇՐՋԱՆԱԿԻՆ ՄԷՋ

Հակառակ անոր որ Հայաստանի վարչապետն ու պաշտպանության նախարարը հրաժարած են մասնակցել վերջերս Մինսքի տեղի ունեցած ՀԱՊԿ-ի գագաթնաժողովին, Քրեմլին յոյս յայտնած է, որ Հայաստան կը շարունակե աշխատանքը ՀԱՊԿ-ի շրջանակին մէջ:



«Անկասկած կարելի է ասուսանք յայտնել, որ Հայաստանի բարձր մակարդակով մասնակցութիւն չկայ գագաթնաժողովին: Մենք յոյսով ենք, որ մասնակցութիւն տեղի կ'ունենայ աշխատանքային, փորձագիտական մակարդակով», ըսած է Քրեմլինի խօսնակ Տիմոթի Փետկով՝ ընդգծելով. «Բնականաբար մենք կ'ակնկալենք, որ Հայաստան շարունակե իր աշխատանքը կազմակերպութեան շրջանակին մէջ»:

Նախապէս Հայաստանի վարչապետն ու Արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչները բազմիցս յայտարարած են, որ Երեւան ներկայիս չի քննարկեր ՀԱՊԿ-էն դուրս գալու կարելիութիւնը, սակայն Հայաստանի ներկայացուցիչները վերջին ամիսներուն չեն մասնակցած կազմակերպութեան ձեռնարկներուն:

Աւարտին յիշենք, որ վերջերս Հայաստան յետս կանչած է Նաեւ ՀԱՊԿ-ի մէջ իր դեսպանը եւ նորը չէ նշանակած:

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԷՋ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻՆ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՅՔԻ» ԲԱՅՈՒՄԻՆ

Ատրպեյճան կը շարունակե նախապատրաստուիլ «Զանգեզուրի միջանցքի» բացումին:



«Ատրպեյճանի կառավարութիւնը կ'աշխատի Զանգեզուրի միջանցքը շահագործման յանձնելու գծով. այս գործընթացներուն կը մասնակցի Նաեւ Մաքսային պետական կոմիտէն (ՄԿԿ): Այժմ մենք կ'աշխատինք Զանգեզուրի միջանցքի անցակէտերուն վրայ», լրագրողներուն յայտնած է պետական մաքսային կոմիտէի նախագահ Շահին Բաղիրով, ըստ «ԱՊԱ» լրատուամիջոցի:

«Մենք միաժամանակ կ'աշխատինք նոր նախագիծերու վրայ, եւ յաջորդ փուլին կը սկսին շինարարական աշխատանքները», ասելուցս է Բաղիրով:

«Զանգեզուրի միջանցքը» կը վերաբերի Հայաստանի տարածքով անցնող մէկ, կամ ասելի ճիշդ, երկու երթուղիի՝ երկաթուղային եւ ճանապարհային: Երեւան կտրականապէս իր մերժումը յայտարարած է «միջանցքային տրամաբանութեան» տրամաբանութեամբ որեւէ մօտեցումի գծով եւ կը մերժե հաղորդակցութիւններուն արտատարածքային կարգավիճակ տալու իրաքանչիւր փորձ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐ. «ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵԾԱՊԵՍ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ Է ԻՐԱՔԻ ՀԵՏ ԵՐԿԿՈՂՍ ՕՐԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՄԱՍԲ, ՄԱՍՆԱԻՈՐԱՊԵՍ՝ ԱՌԵՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՄԷՋ»



Իրաք կը հանդիսանայ միջին արեւելեան տարածաշրջանի մէջ Հայաստանի կարեւոր եւ վստահելի գործընկերը: Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնփրէս»-ը, Իրաքի նախագահ Ապտուլ Լաթիֆ Ռաշիտի հետ հանդիպումէն ետք տեղի ունեցած միացեալ յայտարարութեան ընթացքին յայտնած է Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեան:

Հայաստանի նախագահը շեշտած է որ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումէն ի վեր այս մէկը Իրաքի նախագահի առաջին պաշտօնական այցելութիւնն է Հայաստան, ինչ որ նոր էջ կը բանայ հայ-իրաքեան յարաբերութիւններուն մէջ, ինչպէս նաեւ խորացման, ընդլայնումի հզօր լիցք կը հաղորդէ բարեկամ պետութիւններու միջեւ բազմուղիտ համագործակցութեան:

Հայաստանի նախագահը գոհունակութեամբ արձանագրած է, որ Հայաստանի անկախութենէն ի վեր, արաբական երկիրներու հետ յարաբերութիւնները կը զարգանան փոխ վստահութեան եւ ջերմ բարեկամութեան մթնոլորտի ներքեւ:

Ապա ասելուցս է, որ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու գործուն զարգացման համար հաստատուն հիմք կը հանդիսանան ինչպէս հայ-արաբական պատմամշակութային առնչութիւններու հարուստ անցեալը, այնպէս ալ Իրաքի մէջ դարերու պատմութիւն ունեցող հայ համայնքի առկայութիւնը:

Նախագահին խօսքով՝ Հայաստան մեծապէս հետաքրքրուած է Իրաքի հետ երկկողմ օրակարգի զարգացման, մասնաւորապէս առեւտրատնտեսական ոլորտին մէջ:


Հայաստանի եւ Իրաքի նախագահները հանդիպման ավարտին վերահաստատած են միջպետական յարաբերութիւնները խորացնելու երկու կողմերու պատրաստակամութիւնը:

44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՍՈՂ «1489» ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼՄԸ ԱՐԺԱՆԱՅԱԲ՝ IDFA ՓԱՌԱՏՕՆԻ ԳԼԽԱԲՈՐ ՄՐՅԱՆԱԿԻՆ

Շարժանկարի բեմադրիչ Շողակաթ Վարդանեանը 44-օրեայ պատերազմի օրերուն ծնողներուն հետ կը փնտռէ անհետ կորսուած եղբայրը՝ Սողմոնը: Տղան անհետ կորսուած էր 2020 թուականի չոկտեմբերին: Երիտասարդ բեմադրիչը, օգտագործելով իր հեռախօսի տեսախցիկը, նկարահանած է եղբոր որոնման ողջ գործընթացը եւ փաստագրած այն փորձառութիւնները, որոնց մէջէն անցած են ինքն ու ընտանիքը:

Վաւերագրական շարժանկարի աշխարհի ամենահեղինակաւոր փառատօնը՝ Ամստերդամի միջազգային փաստավաւերագրական փառատօնը (IDFA), «Լաւագոյն ֆիլմ» անուանակարգով յաղթող ճանչցած է Շողակաթ Վարդանեանի, 44-օրեայ պատերազմի անձնական ողբերգութիւնէն ծնած «1489» տեսանկյան ֆիլմը եւ շնորհած գլխաւոր մրցանակը:

Ֆիլմը արժանացած է նաեւ «FIPRESCI» մրցանակին, որ աննախադէպ յաջողութիւն է հայ շարժանկարի պատմութեան մէջ:



ՆՈՐԷՆ ՊԻՏԻ ՅԱՌՆԷ՛ ՓԻԻՆԻԿԷՆ

(ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 80-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ)

ՅԱԿՈՐ ՄԻՏԵՏԻՔԵԱՆ

Հիմնադր գրնե 5 պատճառ կարելի է բերել Լիբանան պետության գոյության իրաւունքը ժխտելու եւ առնուազըն 10 պատճառ՝ այդ իրաւունքը հաստատելու կամ վերահաստատելու համար:

Հակասութիւններու երկիրն է Լիբանանը: Որքան փոքր իր տարածքով (հազիւ 10,400 քառ. քիլոմետր), այդքան մեծ՝ տարածաշրջանային ընկալումներով, որքան տկար իր ապահովութեամբ (հայաստանցիները պիտի ըսէին՝ անվտանգութեամբ), այդքան գայթակղիչ իր անպաշտպանութեամբ: Արաբները զայն, յատկապէս մայրաքաղաքը Նկատի ունենալով, «Արուս ալ-Պահիր» (ծովահարս) կոչած են, բայց բոլորը գիտեն, թէ ինչ կրնայ պատահիլ անպաշտպան մնացած հարսերուն հետ...

Մէկ կողմ ձգելով Լիբանանի հազարամեակներու պատմութիւնը, փինիկեցիներէն մինչեւ հռոմեական տիրապետութիւն, արաբական արշաւանքներ, օսմանեան ենթակայութիւն, ֆրանսական «հոգատարութիւն», Մեծն Սուրիոյ մաս եւ այլ հանգրուաններ, որոնց յաջորդեց, երկարատեւ քննարկումներէ ու բանակցութիւններէ յետոյ, Անկախութեան հռչակումը՝ անյարիր ժամանակի եւ իրավիճակի «զուգահիստութեամբ», 1943 թուական Նոյեմբերի 22, երկրորդ համաշխարհային կիսուն, երբ տակաւին գերմանական zipplin-ներ կը սաւառնէին լիբանանցիներու գլխուն վերեւ, իսկ հացը դեռ կտրօններով կը տրուէր քաղաքացիներուն:

Սակայն լիբանանեան բուն ողիսականը սկիզբ առաւ այն պահուն, 1947-ին, երբ հրեաները մերժեցին Պաղեստինի հողին վրայ զոյգ պետութիւն ստեղծելու,- հիմա Նոյնպէս կը մերժեն,- միջազգայնօրէն ընդունուած առաջարկը եւ սկսան զինու ուժով բռնագաղթի ենթարկել արաբները եւ ընդհանրապէս ոչ-հրեաները, ներառեալ՝ ցեղասպանութենէն մազապործ հայերը՝ Հայֆայէն ու Եաֆայէն: Հոծ թիով պաղեստինցիներ ապաստան գտան, բայց արաբական երկիրներու ներքին պայմանաւորութեամբ՝ նոր քաղաքացիութիւն չստացան ապաստան տուած երկիրներուն մէջ՝ Լիբանան, Սուրիա, Եգիպտոս եւ այլուր:

Ի դէպ, այս մասին կարելի է վկայութիւն ունի մեր ամենահմուտ արեւելագետ-պատմաբան Նիքոլայ Յովհաննիսեանը, որ 70-ականներուն Պէրոյթ գտնուելով՝ պաղեստինցիներու մեծ առաջնորդ Եասեր Արաֆատի հետ առանձնազրոյցի մը ընթացքին վերջինէս հետեւեալ դիտողութիւնը լսած է. «Հայերու գլխաւոր սխալը այն եղաւ, որ ի տարբերութիւն պաղեստինցիներու, ցեղասպանութենէն եւ բռնագաղթէն ետք ընդունեցիք ձեզի ապաստան տուած երկիրներուն քաղաքացիութիւնը, այդպիսով դուք ձեզ զրկեցիք, որպէս այլ երկիրներու քաղաքացիներ, ձեր բուն հայրենիքը վերադառնալու իրաւունքէն»:

Եւ իսկապէս՝ պաղեստինցիները արաբական երկիրներու մէջ մնացին որպէս պաղեստինցի գաղթականներ՝ որոնք կը պայքարին իրենց հայրենիք վերադառնալու իրաւունքով: Սակայն այդ իրաւունքը եւ այդ իրաւունքին իրացումին համար անոնց պայքարը պատիժ դարձաւ յատկապէս քաղաքական տկար կառուցուածք եւ պաշտպանական տկար ներուժ ունեցող Լիբանանի համար, որ Նշաւակ դարձաւ իսրայելական՝ մինչեւ օրս շարունակուող յարձակումներուն, որոնց նպատակը ոչ միայն հարուած հասցնելն է պաղեստինեան գաղթակայաններուն, այլ նաեւ՝ Լիթանի գետին ջուրերով Նեկեի անապատը ոռոգելը...

Լիբանանը ուներ խոցելի ուրիշ կողմ՝ համայնքային-կրօնական իր ներքին կառոյցը: Ֆրանսական «հոգատար» իշխանութիւնը կարճաժամկետ հաշուարկով գծած էր երկրի ներքին ճարտարապետութիւնը՝ առաւելութիւնը տալով՝ հանրապետութեան նախագահ, բանակի ղեկավարում եւ այլն, անշուշտ Վատիկանի թելադրանքով նաեւ, քրիստոնէյ-մարոնիթ համայնքին, որ 40-ականներուն երկրին մեծամասնութիւնը կը կազմէր: Սխալ կամ դաւադրական կարգադրութիւն: Ոչ շատ ժամանակ անց այդ մեծամասնութիւնը ի չիք դարձաւ. մահմետական համայնքները, մասնաւորաբար շիիթ մահմետականները, իրենց ցեղային վերարտադրողականութեան եւ քրիստոնէաներու գաղթելու պատրաստականութեան հետեւանքով մեծամասնութիւն դարձան: Խախտեցաւ երկրին



ներքին հաւասարակշռութիւնը, որուն հետեւանքով, նաեւ արտաքին՝ արաբական, իսրայելական ու միջազգային միջամտութիւնը, առնուազն երկու անգամ՝ 1958-ին եւ 1975-ին, Լիբանանը արիւնալի եւ կործանարար ցնցումներու ենթարկուեցաւ, որոնց զոհ գացին նաեւ մեր ազգակիցներէն շատեր, յատկապէս առաջինին՝ որ բնորոշուեցաւ իբրեւ եղբայրասպան բախումներ՝ մէկ կողմէ ՀՅԴ-ի, միւս կողմէ՝ ՄԴՀԿ եւ ՌԱԿ համախմբման միջեւ: Ատիկա դաս եղաւ, որ յաջորդ՝ 15 տարի տեւած քաղաքացիական յորջորջուած պատերազմին հայկական կուսակցութիւնները ամուր պահեն ազգային միասնութեան սկզբունքները: Սակայն փոխարէնը տեղի ունեցաւ «հայկական հիւանդութեան» միւս երեւոյթը՝ զանգուածային արտագաղթը դէպի Մ. Նահանգներ ու եւրոպական երկիրներ...

Յամենայնդէպս պէտք է խոստովանինք, որ Լիբանանի համայնքային յոռի դրութիւնը նպաստաւոր եղաւ լիբանանահայութեան եւ ընդհանրապէս հայութեան համար: Առաջին՝ շնորհիւ աւելի քան 50 դպրոցներու եւ կրթաբարեգործական հաստատութիւններու, մարզական, մշակութային ու երիտասարդական ակումբներու եւ հիմնարկներու, առաւելաբար Կիլիկիայէն եկած գերազանցապէս թրքախօս հայութիւնը ընդամենը 20-25 տարուան ընթացքին դարձաւ հայախօս եւ հայագիր: Ասոր նպաստեց նաեւ տեղի հայկական մամուլը՝ 3, 4, երբեմն 5 անուն օրաթերթերու առկայութիւնը. սովորական լիբանանահայը անոնց միջոցով կը ծանօթանար տեղական եւ միջազգային, նաեւ հայրենական Նորութիւններուն: Լիբանանահայութեան, նմանապէս սուրիահայութեան դէպի հայախօսութիւն դարձի այս հրաշալի ընթացքը, այն ալ՝ պետականութիւն չունենալու պայմաններուն տակ իրագործեալ՝ արժանի է պատմաբաններու եւ հասարակագետներու ամենալուրջ ուշադրութեան, որով զբաղած են, որոշ չափով, Սիսակ Վարժապետեանը եւ Զաւէն Մարրիան պատմաբանները, ինչպէս նաեւ մերօրեայ ձեռնհաս հետազոտող Յակոբ Չոլաքեանը: Ու մինչ կը սպասենք նոր հետազոտողներու, իմացնենք մեր ընթերցողներուն կարելի փաստ մը՝ միջազգային հարթակներէն:

Փաստը կու տայ հեղինակաւոր New York Times-ը իր տարեկան World Almanac-ներուն՝ Lebanon վերտառութեան տակ: Տեղեկութիւն տալով Լիբանանի մէջ ընդունուած կամ գործածուող լեզուներուն՝ պաշտօնական արաբերէնի, կիսապաշտօնական ֆրանսերէնի մասին, կը նշէ նաեւ հայերէնը: Բացառիկ երեւոյթ՝ Հայաստանէն դուրս որեւէ այլ երկրի մէջ այդպիսի բան չէ պատահած:

Ահա թէ ինչու սփիւռքահայութեան ազգային զարթօնքի, հայկականութեան վերարթնութեան, վերջապէս՝ Հայ դատի եւ ընդհանրապէս հայրենապաշտութեան սփիւռքեան օրրանը պէտք է համարենք Լիբանանը իր հանդուրժողականութեան, մարդասիրութեան եւ ազատութիւններու պաշտպանութեան մթնոլորտով:

Երախտագիտութեան անխառն զգացումներով այդ երկրին մաղթենք կայուն խաղաղութիւն, խոչընդոտները կրկին ու նորէն յաղթահարելու ուժ եւ կամք:

Երեւան
«Պայքար» շաբաթաթերթ

ԷՐՏՈՂԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿՈՉ ՈՒՂՂԱԾ Է ԻՐ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ ՂՐԱՑԻՆԵՐՈՒ ՀԵՏ ԴԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՓՆՏՈՒՄ

Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողան կոչ ուղղած է Հայաստանին իր ապահովութիւնը փրկող ղրացիներու հետ համագործակցութեան մէջ, եւ ոչ թէ հազարաւոր քիլոմետրեր հեռու: Ինչպէս կը գրէ Անատոլու գործակալութիւնը, Թուրքիոյ ղեկավարը այս միտքը արտայայտած է 20 Նոյեմբերին կառավարութեան Նիստէն ետք ժողովուրդին ուղղած իր ուղերձին մէջ:

«Արեւմտեան որոշ գերտերութիւններ մինչեւ այս պահը չեն գիտակցիր, որ ԼՂ պատերազմէն սկսեալ մեր տարածաշրջանին մէջ Նոր դարաշրջան կը բացուի: Հայ ժողովուրդին ու անոր ղեկավարներուն համար լաւ կ'ըլլար ապահովութիւն փնտռել ոչ թէ հազարաւոր քիլոմետրեր հեռու, այլ դրացի երկիրներու հետ խաղաղութեան ու համագործակցութեան մէջ», ըսած է ան:

Թուրքիոյ առաջնորդը ընդգծած է, որ Արեւմտեան երկիրներու կողմէ ղրկուած զենքն ու զինամթերքը չեն կրնար կայուն խաղաղութիւն ապահովել: Ան նաեւ կոչ ուղղած է Հայաստանին սեղմելու Ատրպէյճանի մեկնած «բարեկամութեան ձեռքը»:

ԱԳԱԳԷՅ
Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ՄԻՏԵՏԻ ՂՎԳՍԼԵԱՆ

Ծանուցումներու
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՍՏՈ Ք. ՄԱՍՈՒՐԵԱՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec


PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

ՄԻՐԸ-ՍՓԵՔԵՅԹԸՐԻ 90-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ

Հոկտեմբեր 28-ը Միրըր-Սփեքեյթըրը շաբաթաթերթին տարեգրության մեջ պիտի մնայ որպես եզակի հանդիսություն, որ տեղի ունեցաւ Պոստոնի Պըրլինկթընի «Մարիոթ» պանդոկի սրահին մէջ հանդիսավարութեամբ յայտնի կատակերգակ Սոնա Մովսէսեանի, մասնակցութեամբ չորս ծանօթ լրագրողներու, բարերար Նուպար ԱՖէեանի եւ բերնէ բերան լեցուն հանդիսականներու: «Ձուլալ» երգչախումբը մաս կազմեց գեղարուեստական յայտագիրով հրամցնելով հայկական դասական եւ տոհմիկ երգեր: Մինչ այդ, բացի շաբաթաթերթին եղան նուիրատուութիւններ Արցախի հայութեան: Ինչպէս նաեւ մեծարուեցան Միրըր-Սփեքեյթըրին տասնամեակներ ամբողջ ծառայած խմբագրական եւ վարչական կազմերու պատասխանատուներ:



Հայեր եկած էին բացի Նիւ Ինկլընտի զանազան հայաշատ շրջաններէն, Միտ Աթլանթիքի, Միտ Ռուսթի, Ուաշինկթընի Միրըրի առաքելութեան հաւատացող հայորդիներ: Ներկայ էին զանազան հայկական կազմակերպութիւններու պատասխանատուներ եւ վարիչներ, Հայաստանի պատուակալ հիւպատոսը, հաւատարիմ ընթերցողներու երրորդ սերունդի ներկայացուցիչներու կողքին նաեւ ներկայ սերունդի ընթերցողներ:

Օրուան հանդիսութեան յանձնախումբի ատենապետ Նիքոլ Պապիկեան Հաժժարի բացման

խօսքէն ետք, հիր եկեղեցականներ՝ Առաքել Ալճալեան, Ղազար Պետրոսեան, Վազգէն Գուգուեան եւ Տիգրան Եումշաքեան հոգեւոր հայրերը օրհնեցին հանդիսութիւնն ու ընթրիքը եւ աղօթեցին Արցախի հայութեան համար, որմէ ետք ընթացք առաւ օրուան պաշտօնական յայտագիրը: Պապիկեան իր խոր գնահատանքը յայտնեց ԱՖէեան ընտանիքի հիմնադրամի վարիչներուն ինչպէս նաեւ միւս բարերարներուն՝ Վահէ Ֆաթթալ եւ Գարոլին Մուկար հիմնադրամներուն:

Մովսէսեան այնուհետեւ բեմ գալով սկսաւ իր կատակերգական յայտագրին խլելով ներկաներուն ծիծաղը:

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Միրըր-Սփեքեյթըրի խմբագրութեան տնօրէն Արամ Արքուն յայտարարեց որ Միտտըլ Սեք գաւառի շերիֆը արգելիչ պատճառով ներկայ պիտի չկարենայ գտնուիլ այս երեկոյ եւ իր գնահատանքի գիրը կը յղէ այս հանդիսութեան առթիւ:

Արքուն այնուհետեւ ներկայացուց մօտ քառորդ դար խմբագրութեան աթոռին վրայ ծառայած Ալին Գրիգորեանը. յիշատակուեցաւ անոր անսակարկ նուիրումը լրագրութեան ու խմբագրական աշխատանքներուն մէջ մասնաւորաբար Միրըրին ծառայելով: Անոր պարտաճանաչ աշխատանքը եւ լուրերու առաքման արագութիւնը տրուեցաւ այս օրերու մեքենայացած լրագրական աշխարհին հետ քայլ պահելու համար: Գրիգորեան խօսք առնելով շեշտեց այս օրերու հայկական լրատուամիջոցներու կարեւորութիւնը լուսաբանելու եւ ճշգրիտ տեղեկութիւններ տալու հայ թէ օտար ընթերցողներուն:



Ալին Գրիգորեան խօսեցաւ Փրոֆ. Եղիշէ ՉրաքՇար. - էջ 9

ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՏՕՆԱՎԱՃԱՌ (BAZAR) ԽԱՆԴԱՎԱՌ ՄԹՆՈԼՈՐՏԻ ՄԷՋ

Կարծես ասանդութիւն դարձած է մոնթբալախայութեան համար սօնավաճառի սովորութիւնը, ոչ միայն կազմակերպող զանազան միութիւններու, այլ մանաւանդ մասնակցողներուն համար, որոնք մեծ անհամբերութեամբ ու խանդավառութեամբ կը մասնակցին գնումներու արշաւանքին:

Կիրակի՝ 19 Նոյեմբերին, սօնավաճառի այդ հաճոյքը վայելցնիք եւ մենք, ներկայ ըլլալով Թեքեան Մշակութային Միութեան կազմակերպած ճոխ Bazar-ին:

Տիկնանց Յանձնախումբը ոչինչ խնայած էր, մի քանի ամիսներէ ի վեր այլազան ամանորեայ պիտոյքներու, մանաւանդ համեղ անուշեղեններու պատրաստութեան:



Ճոխ սեղաններու շուրջ խումբերամ բազմութիւնը հաւաքուած կը խուզարկէր կը քննէր իսկ համեղ ճաշերու բոյրը կը պարուրէր բոլոր սրահը: Օրուան նախագահուին ազնուափայլ տիկ. Սիլվա Թելալեանի եւ Տիկնանց



Յանձնախումբի ներկայութեան տեղի ունեցաւ ժապաւնի հատումը: Տէրունական աղօթքով բացման օրհնութիւնը կատարեց պրն. Սամուէլ Քոշկերեան: Նախ անդրադարձաւ Թեքեան Մշակութային Միութեան ընկերային առաքելութեան մասին, յետոյ յիշեց Տիկնանց Յանձնախումբի ժրջան աշխատանքն ու պատրաստակամութիւնը: Յուզիչ էր մասնաւորաբար երբ պրն. Քոշկերեան յիշեց յիշատակը ողբացեալ տիկ. Վարդուհի Պալեանի երբ այս վերջինը միշտ ներկայ էր ու իր քնքուշ ձայնով կ'արտասանէր «գգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր»ը: Կիճակահանութեան բազմաթիւ նուէրները աւելի բարձրացուցին տրամադրութիւնը ներկաներուն: Բաժանումը միշտ դժուար է, մանաւանդ երբ ժպիտ կայ ամենուրեք եւ ուրախութիւն բոլոր սրտերուն մէջ:

Ներկայ մը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՔ Ե ՂԱՐԱԲԱՂԻ «ԱՔՍՈՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ»

Վերջին ժամանակներուն ու յատկապէս Արցախի հայաթափումէն ասդին տարբեր հարթակներու վրայ երեւելի դարձաւ Արցախը քաղաքական մարմինը պահելու, պահպանելու դրոյթը:

Ընդդիմադիր շրջանակներ, որոնք հաւանաբար կը կանգնին այս դրուածքի շեմին կը պաշտպանեն այն թէզը, ըստ որուն Արցախը, պէտք է պահպանէ իր ուրոյն քաղաքական ամբողջութիւնը եւ այդ հիմունքով ալ ունենայ, կազմէ «Աքսորի կառավարութիւն» մը:

Անշուշտ մինչեւ այս պահը այդ առումով ոչ մէկ յստակ պատկերացում գոյութիւն ունի, թէ ինչ տեսակի կառավարում, կամ ինչ տեսակի ընտրութեամբ պիտի կազմուի այդ կառավարութիւնը, բայց եւ այնպէս եթէ հարցը տարողունակ կերպով դիտարկենք պիտի համոզուինք անշուշտ, որ այդ մանրամասնութիւնները երկրորդական են:

Այստեղ անշուշտ բեկումնային հարց մըն ալ կը ծագի, որովհետեւ Հայաստանի իշխանութեան մէկէ աւելի ներկայացուցիչներ ունին այն համոզումը, որ Արցախի գծով այդ տիպի ցանկացած քայլ կը համարուի վտանգ Հայաստանի Հանրապետութեան:



Այս մտեցումը դատապարտելէ, կամ Հայաստանի իշխանութիւններէն աւելին պահանջելէ բացի կայ առարկայական հարցադրում մը կապուած ՀՀ իշխանութեանց կեցուածքներուն հետ, որովհետեւ ոչ մէկ մտեցում, ոչ մէկ կեցուածք եւ ոչ մէկ դիրքորոշում «երկինքէն պիտի չիլնայ»:

Մեզի համար հաւաքապէս դառն են այդ դէպքերը, որ տեղի ունեցան Արցախի մէջ: Նախ արագ պատերազմ, յետոյ զոհեր ու անբաժնիքներ ու անկէ ետք ալ արագ հրադադար, Պաքոյի կողմէ դրուած պայմաններուն շուրջ համաձայնութիւն ու անկէ ետք ցաւոտ գաղթականութեան ալիք մը, որուն հետեւանքով Արցախն ամբողջութեամբ կը հայաթափուի:

Ոչ մէկ հայու համար, ըլլայ ան իշխանական կամ ընդդիմադիր այդ պատկերները ընդունելի էին, ի հարկէ այլ խօսք, որ ո՛վ կը կրէր, կամ ապագային ալ ո՛վ իր ուսերուն պիտի կրէ եղածներուն ողջ պատասխանատուութիւնը:

Միւս կողմէ, եթէ իրականութիւնները ճիշդ հաշուառենք, ապա մեր առջեւ պիտի ստեղծուի այն իրական պատկերը, որ անցնող ամիսներուն Արցախէն եղած հայաթափումը պատահականութեան մը արդիւնքը չէր: Այն իմաստով, որ ինչպէս շատ-շատերուն համար, այս տողերը գրողին համար ալ Արցախի ժողովուրդի անվտանգութեան իրական եւ իրական երաշխիքը ունէր միայն ու միայն ռուսական խաղաղապահ կողմը, եւ այդ խաղաղապահ ուժերու ներկայութեամբ էր նաեւ, որ արցախցիք 2020 թուականի Նոյեմբերին յայտարարուած հրադադարէն անմիջապէս ետք վերադարձան իրենց հողերը: Ճիշդ է, որ այդ պատերազմի օրերուն ամբողջ Արցախը չէր դատարկուած, բայց եւ այնպէս հազարաւորներ տեղափոխուած էին Երեւան եւ Հայաստանի այլ շրջաններ:

Չենք խօսիր միայն Շուշիի եւ Հադրութի բնակչութեան մասին, որոնք ամբողջութեամբ կորսնցուցած էին իրենց յոյսը եւ տեղաւորուած Նոյնիսկ Հայաստանի ամենահեռաւոր շրջաններուն մէջ՝ Կիւմրի կամ Շիրակի մարզի այլ շրջաններ, այլ կը խօսինք այն ընտանիքներուն մասին, որոնք մայրաքաղաք Ստեփանակերտէն, Արցախի երկրորդ եւ երրորդ կարեւոր քաղաքներէն՝ Մարտակերտէն ու Մարտունիէն հեռացածներուն մասին:

Ու մեր այս հայրենակիցները հաւանաբար իրենց մտքերուն ունենալով այն վառ յոյսը, որ Ռուսիան ամէն գնով պիտի պահէ-պահպանէ արցախցիներուն անվտանգութիւնն ու ապահովութիւնը: Բայց եկուր տես, որ հակառակը պատահեցաւ:

Այստեղ առանց չարակամութիւն, կամ հակա-ռուսական քարոզի մէջ ինչպիսի պէտք է լսել արցախցիներու այն վկայութիւնները, որոնք կը պատմեն եղածներուն ահաւորութեան ու ռուսական կողմին «անգործութեան» մասին: Փաստը կը մնայ փաստ, բայց եւ այնպէս եղած դէպքերը արժանի են լուրջ վերլուծութեան:

Ինչո՞ւ Ռուսիան իրաժարեցաւ իր վրայ դրուած պարտաւորութիւններէն, կամ ինչ ստացաւ Ռուսիան այս բոլորէն եւ ամենակարեւորը Արցախը Ատրպէյճանին «լքելու» իր քայլով, Մոսկուա ինչ կորսնցուց Հարաւային Կովկասի մէջ եւ անոր դիմաց ինչ շահեցաւ (եթէ շահեցաւ) այլ տեղէ:

Հարցումները շատ կարեւոր են, ոչ միայն առաջին գիծ մղելու համար հայ-ռուսական վիրաւոր յարաբերութիւններու հարցը, այլ նաեւ իրողապէս



հասկնալու, որ Արցախի խնդրով, ինչ կը մտածէ Ռուսաստանը:

Այս հարցումը կը փոխառնչեմ այս նիւթին տրուած ընդհանուր խորագրին հետ, քանզի, բոլորիս համար յստակ է, որ առանց քաղաքական իրական նեցուկի մը անկարելի է առաջ տանիլ Արցախի «Աքսորի կառավարութիւն» մը ստեղծելու խնդիրը:

Այդ նեցուկը պարտաւոր է ունենալ աշխարհաքաղաքական ընկալում եւ այդ պարագային, եթէ արեւմուտքին համար Արցախի էջը փակուած կը համարուի, ապա Նոյն պարունակին մէջ ինչ կը մտածէ Ռուսական կողմը:

Աւարտելով նիւթս այս հատուածը հարկ կը համարեմ նշել, որ Արցախի համար Նոր վիճակ մը ստեղծելու հիմնարար քայլերէն կ'ըլլայ այն, որ Նոյն այդ «Աքսորի կառավարութիւն»ը կազմուի Հայաստանէն դուրս, պայմանով որ ան ունենայ կարեւոր եւ իսկական նեցուկ:

Այլապէս մէտքեղ նետուած բոլոր մակարդակի առաջարկները չեն անցնիր հրավառութեան սահմանները եւ մեծ հաշուով անոնք կրնան դառնալ արկածախնդրութեան հերթական փորձեր, որոնք մեծ հաշուով ալ վնասակար են Հայաստանի համար:

Ի դէպ վերադառնալով Արցախեան խնդրին Հայաստանի իշխանութիւններու ընդհանուր կեցուածքին եւ ունեցած թերացումներու թեմային ստորեւ կը ներկայացնեմ ամերիկահայ վերլուծաբան եւ քաղաքագետ Նրայր Պալեանի գրչով վերջերս ստորագրուած յօդուածէն հատուած մը, նշելով նաեւ որ յօդուածը լոյս տեսած է Modern Diplomacy ամերիկեան հանգամանաւոր պարբերականին մէջ:



Պալեան կը գրէ՝

«Հայաստանի կառավարութիւնը՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ, կը կրէ Լեռնային Ղարաբաղի կորուստի համար առաջնային քաղաքական պատասխանատուութիւն: 2022 թուականի Սեպտեմբերին Փաշինեան ճանչցաւ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը եւ ընդունեց, որ Լեռնային Ղարաբաղն Ատրպէյճանի մաս է՝ պայմանով, որ անկախ (կղզիացած տարածք) հայերու «իրաւունքներն ու անվտանգութիւնը» կրնան երաշխաւորուիլ Ատրպէյճանի ինքնիշխանութեան ներքոյ: Թէեւ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան ճանաչումն անխուսափելի է՝ հաշուի առնելով երկու երկիրներու միջեւ սահմանի սահմանումը, Փաշինեանի կողմէ Լեռնային Ղարաբաղի ճանաչումն Ատրպէյճանի մաս ըլլալու անհատոյց զիջում է, որ կ'առաջարկուի առանց անկախ իշխանութիւններու հետ համաձայնութեան կամ խորհրդակցութեան:

Փաշինեանի զիջումը, որ բազմիցս վերահաստատուած է 2023 թուականին, փակեց միջազգային աջակցութեան դուռը՝ շարունակելու տէ ֆաթթօ (իրողական) անկախութիւնը եւ ապագային Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը տէ ժիւրէ (իրաւականօրէն) ճանչնալուն:

Որպէս ամբոխահաճ առաջնորդ՝ Փաշինեան, հաւանաբար, արձագանգեց հայ բնակչութեան մէկ մասի ցանկութիւններուն, որոնք յոգնած էին Ատրպէյճանի հետ տասնամեակներու պատերազմէն: Այս ցանկութիւնները համընկած են Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական Միութեան նախապատուութիւններուն հետ՝ արագ լուծելու Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը:

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 27 NOVEMBRE 2023

L'avenir énigmatique des communications dans le Caucase du Sud

Écrit en anglais par Benjamin Poghosian et publié dans *The Armenian Mirror-Spectator* en date du 13 novembre 2023

La deuxième guerre du Haut-Karabagh a relancé les discussions sur le rétablissement des communications dans le Caucase du Sud. L'article 9 de la déclaration trilatérale du 10 novembre 2020 articulait la vision de communications ouvertes entre l'Arménie et l'Azerbaïdjan, mettant l'accent sur les routes reliant les régions occidentales de l'Azerbaïdjan à la République autonome du Nakhitchevan et envisageait un rôle pour les troupes frontalières russes. L'idée du rétablissement des communications dans le cadre d'un règlement entre l'Arménie et l'Azerbaïdjan est la pierre angulaire des négociations menées depuis la fin de la première guerre du Haut-Karabagh au début des années 1990, et toutes les options élaborées par le Groupe de Minsk de l'OSCE contenaient une certaine référence à cette idée. La déclaration trilatérale a semblé apporter une certaine clarté, et deux mois plus tard, une autre déclaration a été signée à Moscou pour établir une commission trilatérale Arménie-Azerbaïdjan-Russie présidée par les vice-premiers ministres pour élaborer les détails techniques.

Cependant, le texte de la déclaration du 10 novembre 2020 est suffisamment vague pour ouvrir la voie à différentes interprétations et interprétations erronées. Cela a probablement été fait délibérément pour créer une « ambiguïté stratégique », comme d'habitude avec ce type de documents. Immédiatement après la signature du document, l'Azerbaïdjan a avancé l'idée du « corridor de Zangezour », qui devait relier l'Azerbaïdjan au Nakhitchevan via la province arménienne de Syounik. L'Arménie s'est opposée au terme « corridor », déclarant qu'un seul corridor a été mentionné dans la déclaration du 10 novembre 2020, le « corridor de Latchine », qui devait relier l'Arménie au Haut-Karabagh.

En décembre 2021, l'Azerbaïdjan a clarifié sa position, arguant qu'il n'y avait pas de contrôle frontalier ni douanier le long du corridor de Latchine, et qu'il ne devrait donc pas y avoir de contrôle frontalier et douanier dans le « corridor de Zangezour ». Dans le cas contraire, l'Azerbaïdjan a menacé d'établir un contrôle frontalier et douanier le long du corridor de Latchine. L'Arménie a rejeté ces affirmations, affirmant qu'il ne pouvait y avoir de parallèle entre le corridor de Latchine et les routes reliant l'Azerbaïdjan et le Nakhitchevan via Syounik. Les débats se sont poursuivis parallèlement aux travaux de la Commission trilatérale. Selon de nombreuses fuites, les parties aux négociations ont progressé dans l'élaboration des modalités du fonctionnement des routes entre l'Azerbaïdjan et le Nakhitchevan via l'Arménie, en mettant l'accent sur le



lancement de la ligne Horadiz (Azerbaïdjan)-Chemin de fer d'Eraskh (Arménie) en premier. Le gouvernement arménien a même créé trois points de contrôle le long de la frontière entre l'Arménie et l'Azerbaïdjan pour faciliter le passage des voitures de l'Azerbaïdjan au Nakhitchevan via l'Arménie.

Cependant, il semble que l'Azerbaïdjan ne veuille pas dissocier le fonctionnement du corridor de Latchine de l'ouverture de routes via l'Arménie et continue de soutenir que ces deux routes devraient avoir les mêmes modalités. Ensuite, l'Azerbaïdjan a établi un point de contrôle le long du couloir de Latchine en avril 2023 et a lancé en septembre 2023 une offensive militaire au Haut-Karabagh, obligeant le président de la République du Haut-Karabagh à signer un décret sur la dissolution de la République d'ici la fin 2023 et s'est engagé au nettoyage ethnique de facto des Arméniens, les forçant tous à quitter le Haut-Karabagh.

Alors qu'il ne restera plus aucun Arménien au Haut-Karabagh et que le couloir de Latchine aura cessé d'exister, il semble que l'Azerbaïdjan accepterait l'existence de contrôles frontaliers et douaniers arméniens sur les routes passant par la région de Syounik. Cependant, tout en reconnaissant publiquement la souveraineté de l'Arménie sur Syounik et en rejetant toute intention de recourir à la force pour ouvrir le couloir via l'Arménie vers le Nakhitchevan, l'Azerbaïdjan affirme désormais que l'Arménie n'est pas en mesure d'assurer la sécurité des Azerbaïdjanais qui passeront par l'Arménie et que « des garanties supplémentaires sont nécessaires ». Ce terme est suffisamment vague pour être interprété et permet à l'Azerbaïdjan de manipuler la situation.

Un autre sujet de discorde concerne l'implication des troupes frontalières russes dans le processus d'ouverture des routes de l'Azerbaïdjan au Nakhitchevan via l'Arménie. Selon la déclaration trilatérale du 10 novembre 2020, toutes les liaisons économiques et de transport régionales seront débloquentes. La République d'Arménie garantit la sécurité des liaisons de transport entre les régions occidentales

Suite à la page 6

Ordonnance de la CIJ dans l'affaire Arménie c. Azerbaïdjan



L'Arménie a salué l'ordonnance de la Cour internationale de Justice (CIJ) du 17 novembre, adoptée à la suite à la demande déposée par la République d'Arménie dans le cadre de l'affaire intentée contre la République d'Azerbaïdjan en vertu de la Convention internationale sur l'élimination de toutes les formes de discrimination raciale (CIEDR).

Dans son ordonnance, la Cour a déclaré que « selon les rapports des Nations unies, plus de 100 000 personnes d'origine nationale ou ethnique arménienne se sont trouvées contraintes de quitter leur lieu de résidence et de rejoindre la frontière arménienne depuis l'opération lancée par l'Azerbaïdjan au Haut-Karabagh, le 19 septembre 2023 ».

L'opération mentionnée « s'est déroulée dans le contexte d'exposition de longue date de la population du Haut-Karabagh à la vulnérabilité et la précarité sociale ». « Les habitants de cette région ont été gravement touchés par la perturbation durable de la connexion entre le Haut-Karabagh et l'Arménie via le corridor de Latchine, qui a empêché le transfert des personnes d'origine nationale ou ethnique arménienne hospitalisées du Haut-Karabagh vers des établissements médicaux en Arménie pour des soins médicaux urgents. Il y a également eu des obstacles à l'importation de biens essentiels vers le Haut-Karabagh, provoquant des pénuries de nourriture, de médicaments et autres fournitures médicales vitales ».

Ainsi, dans son ordonnance du 17 novembre, la Cour a estimé qu'il existe un risque imminent de préjudice irréparable envers les droits des Arméniens en vertu de la CIEDR.

En ce qui concerne la partie opérationnelle, outre les engagements unilatéraux de l'Azerbaïdjan, qui sont « contraignants et créent des obligations juridiques », y compris son engagement à faciliter l'accès au CICR et aux inspections de l'ONU, à protéger et à ne pas endommager ou détruire le patrimoine culturel, les monuments, objets et sites, par l'ordonnance du 17 novembre, la Cour a en outre ordonné à l'Azerbaïdjan de :

Suite à la page 6

Un projet Carrefour de la paix en Arménie



Le gouvernement arménien a présenté le projet « Carrefour de la paix » qui comporte quatre grands principes.

Principe n°1 : Toutes les infrastructures, y compris les routes, les chemins de fer, les voies aériennes, les oléoducs, les câbles et les lignes électriques, fonctionnent sous la souveraineté et la juridiction des pays qu'elles traversent.

Principe n°2 : Chaque pays, à travers ses institutions étatiques, assure sur son territoire le contrôle frontalier, douanier et la sécurité de toutes les infrastructures, y compris le passage sur son territoire des véhicules, des marchandises et des personnes.

Principe n°3 : Ces infrastructures peuvent être utilisées aussi bien pour le transport international que national.

Principe n°4 : Tous les pays utilisent toutes les infrastructures sur des bases de réciprocité et d'égalité.

Préserver la présence arménienne dans la vieille ville de Jérusalem

« Nous devons surmonter tous les risques qui menacent la présence arménienne vieille de 1 600 ans dans la vieille ville de Jérusalem », a déclaré la Fondation Tatoyan dans un message sur Facebook.

« Notre tâche collective est de préserver le Patriarcat arménien de Jérusalem, la communauté, les clubs et organisations

Suite à la page 6



Les causes profondes du conflit entre l'Arménie et l'Azerbaïdjan

Les discours de haine, l'animosité et l'inimitié qui se répandent à travers les médias sociaux sont pour nous aussi l'une des causes profondes du conflit, a déclaré le représentant de la République d'Arménie pour les questions juridiques internationales, Yeghishe Kirakosyan, lors de la 21e réunion d'automne de l'Assemblée parlementaire de l'OSCE, à Erévan, le 19 novembre.

« C'est très inquiétant. C'est pourquoi l'Arménie a engagé une procédure auprès de la Cour internationale de Justice (CIJ) sur la base de la Convention sur l'élimination de toutes les formes de discrimination raciale. Il s'agit d'une convention clé qui interdit les politiques de discrimination et d'animosité raciale envers des groupes spécifiques, y compris les groupes ethniques », a-t-il déclaré.

Selon Kirakosyan, ce à quoi l'Arménie a été confrontée ces dernières années est le résultat d'une inimitié et d'une propagande de haine qui durent depuis des décennies, notamment de la part des dirigeants politiques de l'Azerbaïdjan.

« C'est la très triste réalité dans laquelle nous vivons. Les affaires que l'Arménie a portées devant la Cour internationale de Justice ont abouti à plusieurs mesures provisoires intérieures qui ont été prononcées par la Cour. Plus précisément, la première a été rendue par la Cour en décembre 2021 et concernait la cessation et la fin de la propagande et des discours de haine de la part des autorités publiques de l'Azerbaïdjan et concernait la préservation des droits des groupes ethniques dont les Arméniens qui sont sous le contrôle de l'Azerbaïdjan ainsi que la préservation des monuments culturels arméniens », a noté Kirakosyan.



Utiliser les finances US pour persécuter des Arméniens par l'Azerbaïdjan

L'entrepreneur Vivek Ramaswamy, candidat aux prochaines élections présidentielles des États-Unis a souligné sur X (Twitter) qu'il était honteux que le contribuable américain ait été utilisé pour financer la persécution des Arméniens chrétiens par l'Azerbaïdjan.

« Je suis étonné qu'aucun candidat à la présidentielle n'ait même reconnu ces atrocités. Bloquer l'aide militaire à l'Azerbaïdjan est la bonne mesure », a ajouté Ramaswamy.



Préserver...

Suite de la page 5

arméniens. Nous devons surmonter tous les risques qui menacent l'intégrité et l'indivisibilité de la présence arménienne dans la vieille ville de Jérusalem, une présence vieille de 1 600 ans.

Merci pour vos efforts inlassables : Garo Ghazarian, Karnig Kerkonian, Hagop Djernazian, Setrag Balian Jr., Liz Mirza Al-Dajani, Ani Nazarian, Fondation Tatoyan », peut-on lire dans le message.

L'avenir...

Suite de la page 5

de la République d'Azerbaïdjan et la République autonome du Nakhitchevan afin d'assurer la libre circulation des personnes, des véhicules et des marchandises dans les deux sens. Le Service des garde-frontières du Service fédéral de sécurité de la Russie est chargé de surveiller les liaisons de transport. Comme mentionné précédemment, le langage est vague et peut être interprété différemment. Cependant, une chose est claire : selon le communiqué, le service russe des garde-frontières devrait jouer un rôle dans le processus.

Entre-temps, à partir de la mi-2022, et surtout en 2023, le gouvernement arménien a commencé à affirmer que la Russie ne devrait jouer aucun rôle dans l'ouverture de routes en Arménie pour relier l'Azerbaïdjan au Nakhitchevan. Il

y a quelques jours, le ministère arménien des Affaires étrangères a publié une déclaration spéciale, affirmant que l'Arménie n'a jamais, dans aucun document, accepté une quelconque limitation de sa souveraineté et que le contrôle d'un pays tiers ne peut être établi sur aucune partie de son territoire souverain. Récemment, un département spécial a été créé au sein du Service national de sécurité d'Arménie pour assurer la sécurité des communications et le passage en toute sécurité des marchandises, des marchandises, des véhicules et des personnes.

Il est difficile de déterminer si la phrase de la déclaration trilatérale du 10 novembre, « Le service des garde-frontières du Service fédéral de sécurité russe sera chargé de superviser les liaisons de transport », signifie l'accord de l'Arménie pour permettre à la Russie de contrôler une partie du territoire souverain arménien, ce que l'Arménie nie désormais. Cependant, il est également impossible

Le Sénat US adopte la loi sur la protection des Arméniens

Frank Pallone, membre de la Chambre des représentants du Congrès des États-Unis et coprésident du groupe arménien du Congrès, a salué l'adoption du projet de loi « Loi sur la protection arménienne » par le Sénat américain.

« J'applaudis le Sénat pour avoir adopté la loi sur la protection des Arméniens. Maintenant, la Chambre doit suivre et adopter mon projet de loi bipartite, HR 5683, qui abrogera l'article 907 et interdira l'assistance américaine à l'Azerbaïdjan. L'agression du président azerbaïdjanais Aliiev contre l'Arménie doit avoir de réelles conséquences », a écrit Pallone sur X, ex-Twitter.

Le Sénat américain a adopté, le 16 novembre, le projet de loi « Loi sur la protection arménienne de 2023 » présenté par le sénateur du Michigan Gary Peters. Ce projet de loi vise à bloquer toute assistance militaire américaine à l'Azerbaïdjan en supprimant le pouvoir du président Biden de déroger à l'article 907 de la loi de soutien à la Liberté (Freedom Support Act) pour les exercices 2024 et 2025.

Chaque année depuis 2002, le Congrès américain donne à la Maison Blanche la possibilité d'y déroger. L'article 907 a été promulgué en 1992 et prévoit de limiter l'aide directe américaine à l'Azerbaïdjan jusqu'à ce que ce dernier prenne des mesures concrètes pour mettre fin au blocus et à ses attaques contre l'Arménie et le Haut-Karabagh.



Ordonnance

Suite de la page 5

1) « (i) veiller à ce que les personnes qui ont quitté le Haut-Karabagh après le 19 septembre 2023 et qui souhaitent y retourner puissent le faire de manière sûre, sans entrave et dans les plus brefs délais ; (ii) veiller à ce que les personnes demeurées au Haut-Karabagh après le 19 septembre 2023 et qui souhaitent partir puissent le faire de manière sûre, sans entrave et dans les plus brefs délais ; et (iii) veiller à ce que les personnes restées au Haut-Karabagh après le 19 septembre 2023 ou retournées au Haut-Karabagh et qui souhaitent y rester soient à l'abri du recours à la force ou à des intimidations susceptibles de les pousser à fuir » ; et

2) « protéger et préserver les documents et dossiers d'enregistrement, d'identité et de propriété privée qui concernent les personnes identifiées au sous-paragraphe (1) et tenir dûment compte de ces documents et dossiers dans ses pratiques administratives et législatives ».

